



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

**«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ
նախագահ պարոն Փ. Թադևոսյանին**


Հարգելի պարոն Թադևոսյան

Ի պատասխան Ձեր 10.02.2016թ. (առցանց համար 6C99-E370-1322) գրության, հայտնում եմ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1-րդ հոդվածի համաձայն 2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների և ապրանքների արտահանման դեպքում դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի) դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ՀՀ կառավարության 05.09.2013թ. N1364-Ն որոշմամբ սահմանված է առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը:

Միաժամանակ, ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 29.12.2015թ. «ՀՀ կառավարության 05.12.2013թ. N1364-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N1571-Ն որոշումը: Որոշմամբ հստակեցվել է, որ օրենքով սահմանված հաշվարկային փաստաթղթերի բացառապես էլեկտրոնային եղանակով դուրս գրման նորմը վերաբերում է որոշմամբ սահմանված կարգին համապատասխան դուրս գրման ենթակա Ձև1, Ձև2 և Ձև3-ով սահմանված հաշվարկային փաստաթղթերին: Հետևաբար, գրությամբ նշված դեպքում ապահովագրական ընկերությանը ներկայացված գումարի հատուցման պահանջով վճարային հաշիվը կարող է կազմվել թղթային եղանակով:

 **Վ. Միրումյան**